ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 22.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/32

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 11.09.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/32 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 11.09.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ պաշտոնապես ներկայացնում է բողոք ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից «Էլեկտրատեխնիկայի, համակարգչային սարքավորումների, գրատախտակի» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-5/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և օրենքի կոպիտ խախտման դեմ:

Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է, որ ս/թ. սեպտեմբերի 4-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն «Armeps» համակարգի միջոցով (ՄՀ.2555377-ՄՀ-ի հրապարակում) info@armeps.am պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ստացել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 04.09.2017թ. հրապարակված «ՀՀ ՊՆ

ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-5/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, որի 5-րդ չափաբաժնով նախատեսվում է Պատվիրատուի կարիքների համար ձեռքբերել «Տեսապրոյեկտորներ»:

Ընկերությունը հայտնել է նաև, որ ուսումնասիրելով հրավերը, պարզել է, որ 5-րդ չափաբաժնով պահանջվող տեսապրոյեկտորների տեխնիկական բնութագրում բացակայում են հստակ տվյալներ պահանջվող տեսապրոյեկտորի կարևորագույն ցուցանիշների՝ իսկական (ֆիզիկական/Native) և արհեստական (ինտերպոլացված/interpolated) կետայնությունների վերաբերյալ, ինչով էլ հենց ամենից առաջ բնորոշվում է ցանկացած պրոյեկտորի գինը:

Բացի այդ, Պատվիրատուն պահանջում է լիովին և բարոյապես հնացած, միայն անալոգային մուտքեր ունեցող սարքավորումներ:

Ընկերությունը հայտնել է, որ ս/թ. սեպտեմբերի 4-ին «Armeps» համակարգի միջոցով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա պարզաբանում ստանալու նպատակով դիմել է Պատվիրատուին, խնդրելով պարզաբանել հետևյալը՝

1. Տեխնիկական բնութագրում նշված «Թույլատվությունը ոչ ցածր քան 1600x1200» վերաբերում է պրոյեկտորի իսկական (ֆիզիկական/Native) կետայնությանը, թե դա արհեստական (ինտերպոլացված/interpolated) կետայնությունն է, ինչպես նաև խնդրել է, որպեսզի Պատվիրատուն հստակ նշի պահանջվող պրոյեկտորի այդ երկու կարևորագույն ցուցանիշները:

2. Ինչով է պայմանավորված այն, որ Պատվիրատուն պահանջում է բարոյապես և լիովին հնացած անալոգային և արդեն իսկ տարիների համակարգիչներից բացակայող «S-Video, կոմպոզիտային, բաղադրիչային» մուտքերի առկայությունը պրոյեկտորում, մինչդեռ՝ ժամանակակից բոլոր պրոյեկտորներում անխտիր տեղադրված թվային HDMI կամ այլ մուտքերը իսպառ բացակայում են:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ սեպտեմբերի 6-ին Ընթացակարգի հանձնաժողովը «Armeps» համակարգի միջոցով տեղեկացրել է հնարավոր մասնակիցներին հարցման պարզաբանման հրապարակման մասին:

Քանզի Պատվիրատուի կողմից տրված պարզաբանումը միայն մասնակի էր պատասխանել հանձնաժողովի առջև դրված հարցերին, ուստի Ընկերությունը սեպտեմբերի 7-ին կրկին դիմել է Պատվիրատուին և խնդրել է նշված հարցերի վերաբերյալ տալ հստակ պարզաբանում:

Ի պատասխան վերը նշված երկրորդ հարցմանը՝ սեպտեմբերի 8-ին՝ այն ժամանակ երբ մասնակիցների կողմից պարզաբանման հարցումների վերջնաժամկետը արդեն իսկ ավարտվել էր, Ընթացակարգի հանձնաժողովը «Armeps» համակարգի միջոցով տեղեկացրել է հնարավոր մասնակիցներին հարցման պարզաբանման հրապարակման մասին:

Սակայն, ստացված պարզաբանումը բարձրացված հարցերի ստույգ և հստակ բացատրությունը կրկին չէր պարունակում և կրում էր զուտ ձևական բնույթ:

Ուստի, չստանալով ստացված պարզաբանումներից ոչ մի լիարժեք պատասխան, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն զրկվում է հայտ ներկայացնելու իր օրինական իրավունքից:

Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները հետևյալն են՝

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին կետը (ձևական է մոտեցել իր պարտականություններին), 13-րդ հոդվածի 1-ին կետը, այն է՝ «... գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, նույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 1-4-րդ ենթակետերը, այն է՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Ընկերությունը, Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

Կասեցնել ՀՀ պաշտպանության նախարարության «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-5/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը թիվ 5-րդ չափաբաժնի մասով՝ մինչ խնդրին լուծում տալը:

Ի լրումն 11.09.2017թ. բողքի «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն 20.09.2017թ. գրությամբ Խորհրդին խնդրել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ս.թ. սեպտեմբերի 4-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-5/3» ծածկագրով գնանշման հարցումը թիվ 5-րդ չափաբաժնի մասով ճանաչել չեղյալ և հրապարակել նոր գնանշման հարցում ճշտգրտված տեխնիկական բնութագրերով, որոնք կներառեն «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 2 անգամ պաշտոնական պարզաբանման ձևով պահանջված ցանկացած տեսապրոյեկտորի կարևորագույն բնութագիր հանդիսացող իսկական (ֆիզիկական Native) կետայնության վերաբերյալ հստակ տվյալները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.09.2017թ. ժամը 11:50-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են 11.09.2017թ. բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

Ի պատասխան Խորհրդի 12.09.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/16497-17 գրության՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.09.2017թ. թիվ ԴՎԱ/3153 գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-5/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացված բողոքի վերաբերյալ դիրքորոշում:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԶՈՒ ՀՕՊ զորքերում շահագործվում են տարատեսակ հատուկ ռազմական նշանակության տեխնիկական համակարգեր, որոնց լրակազմերում առկա են տարբեր տարեթվերի արտադրության տեսապրոյեկտորներ:

Տեսապրոյեկտորների փոխարինման նպատակով անհրաժեշտ է որպեսզի ձեռքբերվող միջոցները համապատասխանեն հայտարարագրված տեխնիկական բնութագրերին, որոնք հստակ սահմանվել են սույն ընթացակարգի հրավերով:

Ինչ վերաբերում է բողոքաբեր կազմակերպության այն պնդմանը, որ Պատվիրատուն պահանջում է բարոյապես լիովին հնացած սարքավորումներ, ապա Պատվիրատուն նշել է, որ ձեռքբերվող նյութական միջոցները կիրառվելու են 2005 և 2006թթ. մշակված հատուկ

ռազմական նշանակության համակարգերի կազմում, որոնցում դեռևս առկա են սույն ընթացակարգի գնման առարկա հանդիսացող ապրանքատեսակները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.09.2017թ. ժամը 11:50-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերը նշված գրությամբ հայտնած դիրքորոշումը:

3. <u>ԳԲԽ-ԱՄ-2017/32 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2017/32 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «Էլեկտրատեխնիկայի, համակարգչային սարքավորումների, գրատախտակի» ձեռքբերման նպատակով գնանշման հարցման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 1 որոշմամբ հրապարակվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-5/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերում նշվել է, որ հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով, 2017թ. սեպտեմբերի 13-ին, ժամը 11:00-ին:

3. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ի՝ տեխնիկական բնութագրի, 5-րդ չափաբաժնով՝ «Տեսապրոեկտորներ» գնման առարկայի համար սահմանվել է՝ տեսապրոեկտոր 3000 ANSI lm/տեխնոլոգիան՝ DLP/17000:1/ թույլատվությունը՝ ոչ ցածր քան 1600x1200, հեռարձակման համակարգի պահպանությունը՝ PAL, SECAM, NTSC համակարգերով, մուտքային ազդանշանի ձևաչափի պահպանությունը՝ 480i, 480p, 576i, 576p, 720p, 1080i, մուտքերը՝ VGAx2, S-Video, կոմպոզիտային, բաղադրիչային, audio mini gack, ելքերը՝ VGA, audio mini gack, RS-232: Երաշխիքային ժամկետ մեկ տարի:

4. Ընկերությունը բողոքով հայտնել է, որ ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերը, պարզել է, որ 5-րդ չափաբաժնով պահանջվող տեսապրոյեկտորների տեխնիկական բնութագրում բացակայում են հստակ տվյալներ պահանջվող

տեսապրոյեկտորի կարևորագույն ցուցանիշների՝ իսկական (ֆիզիկական/Native) և արհեստական (ինտերպոլացված/interpolated) կետայնությունների վերաբերյալ, ինչով էլ հենց ամենից առաջ բնորոշվում է ցանկացած պրոյեկտորի գինը:

5. 06.09.2017թ. Ընկերությունը Ընթացակարգի հրավերի թիվ 5-րդ չափաբաժնի մասով պարզաբանում ստանալու նպատակով armeps էլեկտրոնային համակարգի միջոցով դիմել է Պատվիրատուին և խնդրել է պարզաբանել հետևյալը.

1) Տեխնիկական բնութագրում նշված «Թույլտվությունը ոչ ցածր քան 1600x1200» վերաբերվում է պրոյեկտորի իսկական (ֆիզիկական/Native) կետայնությանը, թե դա արհեստական (ինտերպոլացված/interpolated) կետայնությունն է և խնդրել է Պատվիրատուին որպեսզի վերջինս հստակ նշի պահանջվող պրոյեկտորի այդ երկու կարևորագույն ցուցանիշները:

2) Ինչով է պայմանավորված այն, որ Պատվիրատուն պահանջում է բարոյապես և լիովին հնացած անալոգային և արդեն իսկ տարիների համակարգիչներից բացակայող S-Video, կոմպոզիտային, բաղադրիչային մուտքերի առկայությունը պրոյեկտորում, մինչդեռ՝ ժամանակակից բոլոր պրոյեկտորներում անխտիր տեղադրված թվային HDMI կամ այլ մուտքերը իսպառ բացակայում են:

6. Ի պատասխան վերը նշված պարզաբանմանը՝ Պատվիրատուն 06.09.2017թ. Ընկերությանն ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

1) Տեխնիկական բնութագրում նշված թույլտվությունը ոչ ցածր քան 1600x1200» վերաբերվում է պրոյեկտորի մաքսիմալ արհեստական թույլտվությանը:

2) S-Video մուտքային ազդանշանի - ձևաչափի անհրաժեշտությունը պայմանավորված է շահագործման մեջ վերոգրյալ ձևաչափով համակարգիչների առկայությամբ:

7. Քանի որ ըստ Ընկերության Պատվիրատուի կողմից տրված պարզաբանումը միայն մասնակի էր պատասխանում հարցերին, ուստի Ընկերությունը 08.09.2017թ.՝ նույն հարցի շուրջ կրկին պարզաբանում ստանալու նպատակով, դիմել է Պատվիրատուին և խնդրել է պարզաբանել հետևյալը.

1) ինչպիսի (ֆիզիկական/Native) կետայնություն պետք է ունենա պահանջվող պրոյեկտորը: Խնդրում ենք նշել ցանկացած թվային պրոյեկտորի այս կարևորագույն ցուցանիշը, որն էլ սարքի լուսային հոսքի հետ համատեղ բնորոշում է ցանկացած պրոյեկտորի գինը:

2) հանձնաժողովի առջև բարձրացված 2-րդ հարցին, այն է. «Ինչով է պայմանավորված այն, որ Պատվիրատուն պահանջում է բարոյապես և լիովին հնացած անալոգային և արդեն իսկ տարիների համակարգիչներից բացակայող S-Video, կոմպոզիտային, բաղադրիչային մուտքերի առկայությունը պրոյեկտորում, մինչդեռ՝ ժամանակակից բոլոր պրոյեկտորներում անխտիր տեղադրված թվային HDMI կամ այլ մուտքերը իսպառ բացակայում են» Պատվիրատուի կողմից տրված պատասխանը՝ S-Video մուտքային ազդանշանի ձևաչափի անհրաժեշտությունը պայմանավորված է շահագործման մեջ վերոգրյալ ձևաչափով համակարգիչների առկայությամբ, անհիմն է: Մաքսիմալ կետայնությունը կազմում է ընդամենը 768x576 կետ (pixels) մինչդեռ՝ նույնիսկ 90-ականների սկզբերին, այսինքն՝ ավելի քան 20 տարի առաջ շահագործվող intel 486 համակարգիչները ունեին առնվազն 800x600 կետայնություն: Նույնը վերաբերում է նաև կոմպոզիտային ինտերֆեյսով փոխանցվող ազդանշանի մաքսիմալ կետայնությանը:

8. Ի պատասխան վերը նշված պարզաբանման՝ Պատվիրատուն 08.09.2017թ. Ընկերությանն ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

1) տեխնիկական բնութագրում նշված թույլտվությունը ոչ ցածր քան 1600x1200» վերաբերվում է պրոյեկտորի մաքսիմալ արհեստական թույլտվությանը և լուսային հոսքը պակաս 3000 ANSI-lm:

2) մուտքերը նշվել են VGAx2, S-Video, կոմպոզիտային, քանի որ վերջինս պայմանավորված է շահագործման մեջ վերոգրյալ ձևաչափով համակարգիչների առկայությամբ:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 11.09.2017թ. ներկայացրած բողոքը՝ կից նյութերով, ի լրումն բողոքի 20.09.2017թ. գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.09.2017թ. թիվ ԴՎԱ/3153 գրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-5/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ***ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ,***

2) գնումների և գնուների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի ***միասնական կանոններով, մրցակցային,*** թափանցիկ, համաչափ, հրապարակային և ***ոչ խտրական հիմունքներով*** կազմակերպում,

2) պայմանագրի կնքման նպատակով ***մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:***

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա, ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ***գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:***

Օրենք 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «Էլեկտրատեխնիկայի, համակարգչային սարքավորումների, գրատախտակի» ձեռքբերման նպատակով գնանշման հարցման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 1 որոշմամբ հրապարակվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-5/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ի՝ տեխնիկական բնութագրի, 5-րդ չափաբաժնով՝ «Տեսապրոեկտորներ» գնման առարկայի համար սահմանվել է՝ տեսապրոեկտոր 3000 ANSI lm/տեխնոլոգիան՝ DLP/17000:1/ թույլատվությունը՝ ոչ ցածր քան 1600x1200, հեռարձակման համակարգի պահպանությունը՝ PAL, SECAM, NTSC համակարգերով, մուտքային ազդանշանի ձևաչափի պահպանությունը՝ 480i, 480p, 576i, 576p, 720p, 1080i, մուտքերը՝ VGAx2, S-Video, կոմպոզիտային, բաղադրիչային, audio mini gack, ելքերը՝ VGA, audio mini gack, RS-232: Երաշխիքային ժամկետ մեկ տարի:

Խորհուրդն արձանագրում է, որ 14.09.2017թ. ժամը 11:50-ին կայացած ԳԲԽ-ԱՄ-2017/32 բողոքի քննարկման ժամանակ Ընկերությունը հայտնել է, որ ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերը, պարզել է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 5-րդ չափաբաժնով պահանջվող տեսապրոյեկտորի տեխնիկական բնութագրում բացակայում են հստակ տվյալներ պահանջվող տեսապրոյեկտորի կարևորագույն ցուցանիշների՝ իսկական (ֆիզիկական/Native) և արհեստական (ինտերպոլացված/interpolated) կետայնությունների վերաբերյալ, ինչով էլ հենց ամենից առաջ բնորոշվում է ցանկացած պրոյեկտորի գինը, ուստի Ընկերությունը պարզաբանում ստանալու նպատակով երկու անգամ դիմել Պատվիրատուին, սակայն Պատվիրատուի պատասխանը չի բավարարել Ընկերությանը, ուստի վերջինս բողոքով դիմել է Խորհրդին:

Խորհրդի այն հարցադրմանը թե արդյոք Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 5-րդ չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագիրը խտրական

է և սահմանափակում է հնարավոր մասնակիցների մասնակցությունը, Ընկերության ներկայացուցիչները հայտնել են, որ խնդիրը կայանում է, նրանում, որ Պատվիրատուն չի նշել թիվ 5-րդ չափաբաժնով գնման առարկա հանդիսացող տեսապրոյեկտորի ֆիզիկական/Native տվյալները, ինչի հետևանքով էլ Ընկերությունը չի կողմնորոշվում ինչ գնի տեսապրոյեկտորներ առաջարկի, քանի որ Պատվիրատուի կողմից նշված տեխնիկական պարամետրերով առկա են տարբեր Ընկերությունների արտադրության տարբեր գներով տեսապրոյեկտորներ:

Ընկերությունը Խորհրդին հայտնել է նաև, որ անհիմն է համարում Պատվիրատուի այն պնդումը, որ թիվ 5-րդ չափաբաժնի տեխնիկական պարամետրում նշված S-Video մուտքային ազդանշանի ձևաչափի անհրաժեշտությունը պայմանավորված է շահագործման մեջ վերոգրյալ ձևաչափով համակարգիչների առկայությամբ:

Վերը նշվածի մասով Պատվիրատուի ներկայացուցիչները քննարկման ժամանակ հայտնել են, որ ՀՀ ԶՈՒ ՀՕՊ զորքերում շահագործվում են տարատեսակ հատուկ ռազմական նշանակության տեխնիկական համակարգեր, որոնց լրակազմերում առկա են տարբեր տարեթվերի արտադրության տեսապրոյեկտորներ, ուստի վերջիններիս փոխարինման նպատակով անհրաժեշտ է որպեսզի ձեռքբերվող միջոցները համապատասխանեն հայտարարագրված տեխնիկական բնութագրերին, որոնք էլ հստակ սահմանվել են սույն ընթացակարգի հրավերով:

Ինչ վերաբերում է բողոքաբեր կազմակերպության այն պնդմանը, որ Պատվիրատուն պահանջում է բարոյապես և լիովին հնացած սարքավորումներ, ապա Պատվիրատուն հայտնել է, որ ձեռքբերվող նյութական միջոցները կիրառվելու են 2005 և 2006թթ. մշակված հատուկ ռազմական նշանակության համակարգերի կազմում, որոնցում դեռևս առկա են սույն ընթացակարգի գնման առարկա հանդիսացող ապրանքատեսակները:

Ընկերության այն պնդմանը, որ թիվ 5-րդ չափաբաժնի մասով գնման առարկա հանդիսացող ապրանքի տեխնիկական պարամետրում նշված չէ պրոյեկտորի իսկական (ֆիզիկական/Native) կետայնությունը, որի հետևանքով Ընկերությունը չի կողմնորոշվում ինչ գնի տեսապրոյեկտոր ներկայացնի, ապա այս մասով Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերությունը կարող է ներկայացնել ցանկացած տիպի տեսապրոյեկտոր, կարևորը այն է, որ վերջինիս պարամետրերը համապատասխանեն Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի պարամետրերին, իսկ այն լրացուցիչ պարամետրերը, որոնք սահմանված չեն հրավերով չեն կարող հայտի մերժման հիմք հանդիսանալ:

Ամփոփելով վերը նշված փաստերը և փաստական հանգամանքները՝ Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, քանի որ Ընթացակարգի հրավերի թիվ 5-րդ չափաբաժնի գնման առարկայի բնութագիրը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, ինչպես նաև չի հանգեցնում գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Ուստի վերոգրյալով պայմանավորված՝ Խորհուրդը գտնում է, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 11.09.2017թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ